Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 2 - 4 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
13 հոկտեմբերի 2022 թ.

ԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ) մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններով (այսուհետ՝ ՄԿԾ ուսպլան) հաստատված ուսանողների փորձառության կազմակերպման, անցկացման և ամփոփման մեխանիզմներն ու պայմանները:
2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
   1) **ուսումնաարտադրական փորձառություն**՝ ՀՊՏՀ բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ՄԿԾ ուսպլանով հաստատված փորձառության

ժամանակահատված՝ ուսանողի մոտ տեսական գիտելիքներին զուգահեռ գործնական հմտություններ և կարողություններ զարգացնելու համար.

2) **գիտահետազոտական կամ հետազոտական փորձառություն՝** ՀՊՏՀ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ՄԿԾ ուսպլանով հաստատված փորձառության ժամանակահատված՝ ուսանողի մոտ ակադեմիական գիտելիքները գործնական, վերլուծական, գիտական և հետազոտական կարողությունների ու հմտությունների միջոցով ամրապնդելու համար.

3) **գիտամանկավարժական փորձառություն՝** ՀՊՏՀ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ՄԿԾ ուսպլանով հաստատված փորձառության ժամանակահատված՝ ուսանողի մոտ մանկավարժական փորձ և կարողություններ ձևավորելու համար.

4) **մոդուլային փորձառություն՝** քննությամբ ավարտվող և փորձառություն պարունակող դասընթաց՝ ՀՊՏՀ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման մոդուլային կառուցվածքով ՄԿԾ ուսպլանով հաստատված դասընթացներ, որոնք պարունակում են գիտելիքի բազմագործոնային գնահատման համակարգում որոշակի տեսակարար կշիռ ունեցող փորձառության բաղադրիչ՝ ուսանողի մոտ տվյալ դասընթացի տեսական գիտելիքներին զուգահեռ գործնական հմտություններ և կարողություններ զարգացնելու համար.

5) **փորձառության տևողություն՝** մասնագիտական ՄԿԾ ուսպլանով փորձառության բաղադրիչին հատկացված ժամանակահատված՝ ՀՊՏՀ ռեկտորատի կողմից հաստատված ժամանակացույցով, որի ընթացքում ուսանողը գտնվում է փորձառության մեջ.

6) **փորձառության ծրագիր՝ ըստ ոլորտների՝** ՀՊՏՀ համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի (այսուհետ՝ ամբիոն) կողմից կազմված և ֆակուլտետի գիտական խորհրդի

կողմից հաստատված ու ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից վավերացված ծրագիր՝ փորձառության տեսակի, հիմնական նպատակի, տևողության, ժամկետների, ըստ փորձառության վայրի տարբերակված վերջնարդյունքների, փորձառության արդյունքներն արտացոլող հաշվետվության ձևաչափի, հաշվետվության ներկայացման և պաշտպանության հիմնական պահանջների, գնահատման մեթոդների և չափանիշների նկարագրությամբ.

7) **փորձառության նկարագիր՝** փորձառության ընթացքում ուսանողի գործողությունները կամ ապահոված արդյունքները, փորձառության վայրի ղեկավարի և ամբիոնի փորձառության ղեկավարի դիտարկումներն արտացոլող հակիրճ հաշվետվություն.

8) **փորձառության հաշվետվություն՝** փորձառության ծրագրին կից ձևաչափ, որը սահմանում է ուսանողի կողմից փորձառության ծրագրով նախատեսված պահանջների կատարման ընթացքի, իրականացրած գործնական վերլուծությունների, դրանցով ապահովված արդյունքների և կատարված առաջարկությունների ներկայացման պահանջները (հաշվետվության կառուցվածքը, ծավալը, բաժինները, օգտագործվող բառերի քանակը՝ ըստ բաժինների).

9) **փորձառության պաշտպանություն՝** փորձառության նկարագրի և փորձառության հաշվետվության հիման վրա կազմակերպվող գործընթաց.

10) **ամբիոնի փորձառության ղեկավար կամ համակարգող՝** փորձառության գործընթացի փուլում ամբիոնի լիազոր անձ՝ սույն կարգի համապատասխան դրույթներով նախատեսված աշխատանքների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պատասխանատու անձ:

2. ՓՈՐՁԱՌՈՒԹՅՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Փորձառությունն ուսումնառության բաղկացուցիչ մասն է, որը հնարավորություն է ընձեռնում ստացած ակադեմիական գիտելիքներն ամրապնդել պրակտիկ գործունեության մեջ՝ ձեռք բերելով մասնագիտական հմտություններ և կարողություններ կամ մանկավարժական փորձ: ՀՊՏՀ-ում փորձառությունը լինում է ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական, մոդուլային և գիտամանկավարժական:
4. Ուսումնաարտադրական փորձառության նպատակն է ամրապնդել և խորացնել ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքներն ու նպաստել մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:
5. Գիտահետազոտական կամ հետազոտական փորձառության նպատակն է գործնական աշխատանքների միջոցով զարգացնել ուսանողների գիտական, հետազոտական և վերլուծական հմտություններն ու ինքնուրույն աշխատելու կարողությունները:
6. Մոդուլային փորձառությունը փորձառության բաղադրիչ պարունակող մոդուլային կառուցվածքով մագիստրոսական մասնագիտական կրթական ծրագրերի որոշ դասընթացներն են, որոնցում փորձառությունը գնահատվում է իբրև դասընթացի բազմագործոնային գնահատման համակարգի բաղադրիչ, որի գնահատման սկզբունքները հստակեցվում են առկա և հեռակա մագիստրատուրայի ուսանողների ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերով:
7. Մոդուլային փորձառության նպատակն է տվյալ դասընթացի շրջանակներում գործնական աշխատանքների միջոցով ամրապնդել և խորացնել դրա առարկայական տիրույթի շրջանակներում ուսանողների ձեռք բերած տեսական

գիտելիքներն ու նպաստել մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

8. Գիտամանկավարժական փորձառության նպատակն է ուսանողի մոտ զարգացնել գիտական և մանկավարժական կարողություններ ու նպաստել մանկավարժական փորձառության ձեռքբերմանը:
9. Փորձառությունների կրեդիտային բեռնվածությունը, տեսակը և տևողությունը, անցկացման փուլերը՝ ըստ ուսումնառության կիսամյակների, որոշվում են համապատասխան մասնագիտության կրթական ծրագրով:
10. Փորձառությունների անցկացման ժամկետները սահմանվում են ՀՊՏՀ ռեկտորատի կողմից՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանվող ուսումնական գործընթացների ժամանակացույցի հաստատմամբ:

3. ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական, մոդուլային փորձառությունները կազմակերպում է կարիերայի կենտրոնը՝ համապատասխան ամբիոնի հետ համատեղ:
12. Ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական, մոդուլային փորձառությունները կազմակերպվում են ՀՊՏՀ-ում, պետական և մասնավոր հատվածում գործող ՀՊՏՀ գործընկեր կազմակերպություններում, հասարակական և քաղաքացիական գործունեություն ծավալող կազմակերպություններում, օտարերկրյա պետությունների կազմակերպություններում, միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում և այլ շահագրգիռ կառույցներում:
13. ՀՊՏՀ ուսանողների համար ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական, մոդուլային փորձառությունները հնարավոր է իրականացնել երեք ձևաչափով՝ ՀՊՏՀ-ի կողմից ուղեգրման, ուսանողների

աշխատավայրում փորձառության կազմակերպման և ուսանողների նախաձեռնությամբ որևէ կազմակերպությունում:

14. Ուղեգրման հիման վրա փորձառությունների կազմակերպման փուլում կարիերայի կենտրոնը գործընկեր կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքում ամբողջացնում է այն կազմակերպությունների ցանկը, որոնք պատրաստ են սահմանված ժամանակահատվածում իրենց մոտ կազմակերպել ուսանողների փորձառությունները:

15. Կարիերայի կենտրոնը փորձառության սկզբից առնվազն 3 ամիս առաջ ամբիոն է ներկայացնում և ՀՊՏՀ պաշտոնական կայքում հրապարակում կազմակերպությունների ցանկը, որտեղ ուսանողները կարող են անցնել ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառությունները, ինչպես նաև լրացման է տալիս փորձառության կազմակերպման գործընթացի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ձևաչափով ֆայլը:

16. Ամբիոնը, փորձառության ղեկավարների միջոցով, մեկ ամսվա ընթացքում կազմակերպում է ուսանողների կողմից փորձառության վայրերի ընտրությունը և տեղեկատվության հավաքագրման ձևաչափով ֆայլի լրացումը:

17. Փորձառության վայրերի ընտրության և տեղեկատվության համաքագրման ձևաչափով ֆայլի լրացման հիման վրա կարիերայի կենտրոնն իրականացնում է փորձառության կազմակերպման աշխատանքները՝ ՀՊՏՀ գործընկերների կողմից ներկայացված պահանջներին համապատասխան:

18. Մասնագիտական աշխատանքի պարագայում ուսանողները կարող են ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառություններն անցնել աշխատավայրում՝ այնտեղից ներկայացված տեղեկանքի հիման վրա: Տեղեկանքն անհրաժեշտ է ներկայացնել կարիերայի կենտրոն փորձառության համար սահմանված ժամկետում:

19. ՀՊՏՀ ոչ գործընկեր կազմակերպությունում սեփական նախաձեռնությամբ պայմանավորվածության ձեռքբերման արդյունքում ուսանողը կարող է տվյալ կազմակերպության կողմից տրամադրած համաձայնագրի հիման վրա անցնել փորձառությունը: Համաձայնագիրն անհրաժեշտ է ներկայացնել կարիերայի կենտրոն փորձառության համար սահմանված ժամկետում:

20. Կարիերայի կենտրոնն ամբիոնին է տրամադրում փորձառությունների նկարագրերն ու դրանց լրացման ուղեցույցը:

21. Կարիերայի կենտրոնն ամբիոնում անցկացնում է ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ խորհրդատվություններ և քննարկումներ՝ ըստ անհրաժեշտության:

22. Մինչև փորձառության սկիզբը ամբիոնը կազմում է ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառության ծրագիրը՝ ըստ ոլորտների, որտեղ ներկայացվում է փորձառության տեսակը, հիմնական նպատակը, տևողությունը, ըստ փորձառության վայրի տարբերակված վերջնարդյունքները, փորձառության արդյունքում հաշվետվության ներկայացման և պաշտպանության հիմնական պահանջները, գնահատման մեթոդները և չափանիշները: Փորձառության ծրագրի օրինակի ձևը ներկայացված է N 1 հավելվածում:

23. Ուսանողների միջազգային փորձառությունների կազմակերպումն իրականացվում է երկու ձևաչափով՝

    1) ուսանողներն ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառություններն անցնում են օտարերկրյա պետությունում գործող կազմակերպությունում՝ համաձայնագրի, տեղեկանքի կամ ՀՊՏՀ ուղեգրման հիման վրա: Այս ձևաչափով փորձառություն անցնող ուսանողների փորձառության

հաշվետվության պաշտպանությունը կազմակերպվում է սույն կարգին համապատասխան.

2) ուսանողներն ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառություններն անցկացնում են ՀՊՏՀ միջազգային փոխանակային ծրագրերի շրջանակներում՝ ՀՊՏՀ միջազգային գործընկեր բուհերում՝ փոխհամաձայնեցված պայմաններով և կրեդիտների փոխճանաչման հիմքով:

24. Տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում ուսանողը հնարավորություն է ստանում նաև փորձառությունն անցնել հեռավար (առցանց) եղանակով: Ուսանողի՝ հեռավար (առցանց) եղանակով փորձառության անցկացման դեպքերը, կազմակերպման ձևը, նախատեսվող աշխատանքները, վերջնարդյունքները, հաշվետվության ներկայացման, գնահատման մեթոդներն ու չափանիշները հաստատում է ՀՊՏՀ ռեկտորը:

25. Գիտամանկավարժական փորձառության կազմակերպումը, ընթացքն ու ամփոփումն իրականացվում է ամբիոնի կողմից՝ ՄԿԾ ուսպլանով սահմանված ժամկետներին համապատասխան:

4. ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

26. Յուրաքանչյուր ուսանողի համար փորձառության վայրում նշանակվում է փորձառության ղեկավար. ամբիոնի ակադեմիական կազմից նույնպես նշանակվում է փորձառության ղեկավար կամ համակարգող, որը պատասխանատու է հաստատված փորձառության ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողության համար:

27. Ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառությունների շրջանակներում ամբիոնի փորձառության ղեկավարը կամ համակարգողը՝

1) ուսանողին խորհրդատվություն է տրամադրում փորձառության վայրի ընտրության հարցում՝ համաձայնեցնելով ուսանողի ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի ղեկավարի հետ.
2) կարիերայի կենտրոնի հետ խորհրդատվական աշխատանքների միջոցով մինչև փորձառության սկիզբը կազմում և ուսանողին է տրամադրում ուսանողի փորձառության ծրագիրը՝ ըստ ոլորտների՝ համաձայնեցնելով ուսանողի ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի ղեկավարի հետ.
3) հետևում է ուսանողների՝ փորձառության վայրեր այցելելու պարբերականությանը, փորձառության ծրագրում սահմանված դրույթների, փորձառության նկարագրերը լրացնելու, նյութեր հավաքագրելու, հաշվետությունները պատրաստելու գործընթացին.
4) ամենշաբաթյա պարբերականությամբ սահմանված ձևաչափով ամբիոնի վարիչին և կարիերայի կենտրոն է ներկայացնում հաշվետվություն ուսանողների փորձառության ընթացքի վերաբերյալ.
5) փորձառության արդյունքների վերլուծության համար ապահովում է կարիերայի կենտրոնի կողմից տրամադրած հարցումների լրացումն ուսանողների կողմից.
6) իրականացնում է փորձառության բովանդակությունից բխող այլ գործառույթներ:

28. Ուսումնարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական և մոդուլային փորձառություններ անցնող ուսանողը պարտավոր է՝

1) սահմանված ժամկետներում կատարել փորձառության վայրի ընտրություն և լրացնել տեղեկատվության հավաքագրման ձևաչափով ֆայլը.

2) աշխատավայրում փորձառությունն անցնելու պարագայում փորձառության համար սահմանված ժամկետում կարիերայի կենտրոն ներկայացնել տեղեկանք աշխատավայրից.

3) համաձայնության միջոցով փորձառություն անցնելու պարագայում փորձառության համար սահմանված ժամկետում կարիերայի կենտրոն ներկայացնել համաձայնագիր ոչ գործընկեր կազմակերպությունից.

4) մինչև փորձառության սկիզբը ծանոթանալ ՀՊՏՀ պաշտոնական կայքում հրապարակված փորձառության ուղեցույցին, փորձառության նկարագրի լրացման ուղեցույցին, ամբիոնի կողմից տրամադրած փորձառության ծրագրին՝ ըստ ոլորտների.

5) փորձառության վայրում դրսևորել ուսանողին հարիր, պատշաճ վարքագիծ, բարեխղճորեն կատարել փորձառության վայրի ղեկավարի և ամբիոնի ղեկավարի հանձնարարությունները.

6) ամենշաբաթյա պարբերականությամբ սահմանված ձևաչափով ամբիոնի ղեկավարին ներկայացնել փորձառության ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն.

7) փորձառության ավարտին սահմանված ժամկետներում ամբիոնի ղեկավարին ներկայացնել փորձառության նկարագիրն ու հաշվետվությունը՝ սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան.

8) մասնակցել փորձառության պաշտպանությանը:

29. Գիտամանկավարժական փորձառության ղեկավարն ապահովում է գիտամանկավարժական փորձառության ծրագրով սահմանված աշխատանքների իրականացումը:

5. ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

30. Փորձառության գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով: Փորձառության գնահատականի ձևավորման գործոնները, դրանց քանակը և բաշխվածությունը, փորձառության հաշվետվությունների և նկարագրերի ներկայացման ժամկետները հաստատվում են ՀՊՏՀ ռեկտորատի կողմից, սահմանվում են առկա և հեռակա ուսանողների ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերով:
31. Փորձառության գնահատումը կազմակերպվում է փորձառության վայրից ներկայացված փորձառության նկարագրի և փորձառության հաշվետվության հիման վրա:
32. Փորձառության նկարագիրը պետք է լինի պատշաճ լրացված, ստորագրած փորձառության վայրի ղեկավարի կողմից, ինչպես նաև կնքված լինի փորձառության վայրի պաշտոնական կնիքով (կնիքի առկայության դեպքում): Փորձառության նկարագրի օրինակելի ձևը ներկայացված է N 2 հավելվածում:
33. Փորձառության նկարագրի և փորձառության հաշվետվության հիման վրա կազմակերպվում է ուսանողների փորձառության հաշվետվության պաշտպանությունը՝ ամբիոնի ակադեմիական կազմից առնվազն երկու անդամից ձևավորված հանձնաժողովի կողմից:
34. Փորձառության պաշտպանության ժամանակ փորձառությունը գնահատվում է դրական, եթե ուսանողը սահմանված ժամկետում ներկայացրել է փորձառության նկարագիրը և ավարտուն հաշվետվություն, ինչպես նաև պատշաճ կերպով պաշտպանում է այդ հաշվետվությունը հանձնաժողովին:
35. Փորձառությունը համարվում է չհանձնած, եթե փորձառության ամփոփ գումարային գնահատականը փոքր է 8-ից, ուսանողը սահմանված ժամկետում չի հանձնել փորձառության նկարագիրը և հաշվետվությունը, ուսանողը չի

ներկայացել փորձառության հաշվետվության պաշտպանությանը կամ պատշաճ կերպով չի պաշտպանել փորձառության հաշվետվությունը:

36. Փորձառության սահմանված տևողության կեսից ավելիին (ըստ շաբաթների) չմասնակցած ուսանողը չի թույլատրվում փորձառության պաշտպանության:
37. Փորձառության պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ՝ ՀՊՏՀ ռեկտորատի կողմից սահմանված ժամկետներում և ձևաչափով:
38. Փորձառության վերահանձնում չի կազմակերպվում:
39. Փորձառությունը չանցած ուսանողը հեռացվում է ՀՊՏՀ-ից՝ իր ուսանողական իրավունքները վերականգնելու և փորձառություն կրկին անցնելու հնարավորությամբ: Ուսումնարտադրական և գիտահետազոտական փորձառությունների ավարտից հետո, երկօրյա ժամկետում, կարիերայի կենտրոնն ամբիոնին է տրամադրում փորձառությունների արդյունքներից ուսանողների բավարարվածությունը գնահատելու համար նախատեսված հարցումների հարցաթերթը:
40. Ամբիոնի ղեկավարն ապահովում է փորձառություն անցած ուսանողների կողմից հարցաթերթի լրացումը 5 աշխատանքային օրվա ընթացքում:
41. Հարցաթերթի լրացումից հետո կարիերայի կենտրոնը ՀՊՏՀ ռեկտորին է ներկայացնում հարցումների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Հավելված N 1

ՕՐԻՆԱԿԻ ՁԵՎ

Ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական փորձառության ծրագրի

ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ/ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Փորձառության տևողությունը	
Փորձառության հաշվետվության հանձնման վերջնաժամկետը	

1. **Ընդհանուր դրույթներ**
2. **Փորձառության ընթացքում լուծվելիք խնդիրների և իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ**
3. **Փորձառության հաշվետվությունների վերաբերյալ՝ ներառյալ ձևաչափը**
4. **Փորձառության արդյունքների ամփոփման վերաբերյալ**

Հավելված N 2

ՕՐԻՆԱԿԻ ՁԵՎ

Ուսումնաարտադրական, գիտահետազոտական կամ հետազոտական փորձառության նկարագրի

ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ/ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

20 _____ - 20 _____ ուսումնական տարի

Ուսանողի անուն, ազգանուն, հայրանուն՝	
Ֆակուլտետ՝	
Մասնագիտություն՝	
Կուրս՝	
Ուսուցման ձևը	
Փորձառության վայրը՝	
Փորձառության տևողությունը՝	

Փորձառության վայրում նախատեսվող հիմնական աշխատանքները

Շաբաթները	**Հիմնական արդյունքները**
1-ին շաբաթ	
2-րդ շաբաթ	
3-րդ շաբաթ	
4-րդ շաբաթ	

5-րդ շաբաթ	
6-րդ շաբաթ	
7-րդ շաբաթ	
8-րդ շաբաթ	
9-րդ շաբաթ	
10-րդ շաբաթ	
Փորձառության վայրի ղեկավար՝	

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

1. Փորձառության վայրի ղեկավարի դիտարկումները՝

Փորձառության վայրի ղեկավար՝

(ստորագրություն) (անուն ազգանուն)

2. Ամբիոնի կողմից նշանակված փորձառության ղեկավարի դիտարկումները՝

_____

_____

_____

_____

_____

_____

Ամբիոնի կողմից նշանակված ղեկավար՝ _____

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ամբիոնի փորձառության ղեկավար՝ _____

(ստորագրություն)

Ամբիոնի վարիչ՝ _____

(ստորագրություն)